

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԶԱՎԵՆԻ

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ը 00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության
թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Բաբկենի Բոստանջյան

տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
Ամալյա Սարիբեկի Սարիբեկյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2019 թվականի փետրվարի 8-ին ժամը 13³⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ Հասցեն 0009, ք. Երևան, Խ. Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թվականի դեկտեմբերի 14-ին:

015 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ա. Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության բնակչության եկամուտների, դրանց գործառնական և վերջնական բաշխման անհավասարությամբ, որը դասվում է հիմնարար տնտեսագիտության խնդիրների շարքին: Բնակչության եկամուտների անհավասարությունը հանգեցրել է հանրության՝ տարբեր խավերի (շերտերի) ակնհայտ տարանջատմանը, որը հետզհետե ավելի է խորանում: Ներկայումս զգալի ուշադրություն է դարձվում բնակչության եկամուտների և հատկապես «Հիմքային եկամուտ» հասկացության բովանդակությանը և տարբեր երկրներում դրա հնարավոր կիրառման հեռանկարների ու արդյունավետության հիմնահարցերին: Մինչ այժմ ՀՀ-ում «Հիմքային եկամտի» վերաբերյալ հետազոտություններ չեն կատարվել: Վերջին տասնամյակների ընթացքում որոշ երկրներ փորձնականորեն ներդրել են «Հիմքային եկամուտ» ծրագիրը: Վերջինիս արդյունավետությունը գնահատելու ու ներդրման արդյունքում՝ պետության տնտեսական աճի վրա ունեցած մասնաբաժինը հաշվարկելու նպատակով, հիմնվելով տարբեր երկրներում «Հիմքային եկամտի» փորձնական ներդրման և դրա արդյունավետության գնահատման՝ հետազոտությունների վրա, աշխարհում աստիճանաբար կիրառվում կամ առաջիկայում պլանավորվում է «Հիմքային եկամտի» ներդրումը աղքատության մակարդակը նվազեցնելու և տնտեսության զարգացման խթանման նպատակով:

Ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ ՀՀ-ում հանրության տարբեր սոցիալական խմբերի շրջանում եկամուտները ձևավորվում են տարբեր եղանակներով: Հանրության մեծամասնությունը զուրկ է շուկայական սկզբունքներին համապատասխան եկամուտների ձևավորումից և ապահովումից, ինչի արդյունքում, ըստ իրականացված հետազոտությունների, Հայաստանի Հանրապետությունում աղքատության մակարդակը տատանվում է 30%-ի սահմաններում¹:

ՀՀ անկախությունից ի վեր, որոշ միջազգային կազմակերպություններ կենտրոնացված գործողություններ էին իրականացնում Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման, կրթության մակարդակը միջազգային չափորոշիչներին համապատասխանեցման և Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցունակության բարձրացման ուղղությամբ²: Համաշխարհային բանկը

¹ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կայք, ՄԱՍ 1. ԱՐՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2008-2016 թթ, http://www.armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf:

² ՀՀ Արտաքին Գործերի Նախարարության կայք, Միջազգային կազմակերպություններ, <http://mfa.am/hy/organizations-representations/>:

շարունակում է Հայաստանի Հանրապետության հետ իր համագործակցությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով քաղաքային և գյուղական համայնքներում աղքատության արագ կրճատմանը:

«Հիմքային եկամուտ» գաղափարը միշտ ուշադրության է արժանացել և՛ փիլիսոփաների և՛ տնտեսագետների կողմից, սակայն դրա ներդրման հետ կապված փաստարկները առավել ակտիվ և արդիական են դարձել վերջին հիստուն տարվա ընթացքում: Եվրոպական շատ երկրներում քննարկվում են մոտ ապագայում «Հիմքային եկամտի» կիրառության հնարավորություններն իրենց երկրներում:

«Հիմքային եկամտի» կիրառման արդյունավետությունը քննարկվում է ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներում: Սույն ատենախոսությունում վերլուծվել է Նամիբիայում և Հնդկաստանում իրականացված փորձը, որի հիման վրա կարելի է ասել, որ «Հիմքային եկամուտ» ծրագրի իրականացումը դրականորեն է ազդել սոցիալ-տնտեսական կառուցվածքի վրա: Օրինակ, Ֆինլանդիայում, որը զարգացած արևմտյան երկիր է, «Հիմքային եկամուտ» ծրագիրը փորձարկվում է սկսած 2017 թ. - ից երկու տարի տևողությամբ: Այդ ծրագրի շրջանակներում 2,000 ֆին գործազուրկները ամսական ստանում են ոչ պայմանական գումար, որը փոխարինում է առկա սոցիալական ծրագրերը, և նրանք այդ գումարը կշարունակեն ստանալ նույնիսկ աշխատանք գտնելու դեպքում:

Վերը նշվածով և ՀՀ-ում սոցիալական խնդիրների լուծման հրատապությամբ էլ պայմանավորված է ատենախոսական աշխատանքի թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության **նպատակը**

«Հիմքային եկամտի» հայեցակարգային դրույթների, կիրառման արդի առանձնահատկությունների ուսումնասիրությունն է և ՀՀ-ում դրա ներդրման հիմնական ուղղությունների ու իրացման հետ կապված առաջարկությունների մշակումը: Նշված նպատակին հասնելու համար առաջադրված հիմնական **խնդիրներն** են.

- հետազոտել «Հիմքային եկամտի» հասկացության հայեցակարգային տնտեսական հիմքերը,
- ուսումնասիրել «Հիմքային եկամտի» կիրառման միջազգային փորձը,
- բացահայտել «Հիմքային եկամտի» կիրառման դրական և բացասական սոցիալ-տնտեսական հետևանքները,

- վեր հանել ՀՀ-ում սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող հիմնական որակական և քանակական ցուցանիշները,
- ուսումնասիրել ՀՀ-ում իրականացվող հիմնական սոցիալական ծրագրերը և դրանց հիմնական ուղղությունները,
- բացահայտել «Հիմքային եկամտի» ներդրման սոցիալ-տնտեսական հետևանքները,
- հետազոտել ՀՀ-ում «Հիմքային եկամտի» ֆինանսավորման հիմնական աղբյուրները և դրանց իրացման հիմնական ուղղությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության **օբյեկտը** ՀՀ-ում իրականացվող հիմնական սոցիալական ծրագրերն են, իսկ **առարկան՝** ՀՀ-ում «Հիմքային եկամտի» ներդրման առանձնահատկությունները, ֆինանսավորման հիմնական աղբյուրների ձևավորումը և իրացման հիմնական ուղղությունները:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության տեսական հիմք են հանդիսացել «Հիմքային եկամտի» հայեցակարգային դրույթների վերաբերյալ արտասահմանյան մի շարք գիտնականների և միջազգային կազմակերպությունների կողմից կատարված հետազոտությունները, հրապարակումները, գիտավերլուծական նյութերը, ինչպես նաև ՀՀ սոցիալ-տնտեսական ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության որոշումները, իրավական այլ ակտերը, այլ երկրների օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերը:

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ Ֆինանսների նախարարության հրապարակված տվյալները, տնտեսագիտական ամսագրերը և այլ նյութեր: Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատական վերլուծությունների, տնտեսավիճակագրական, գրաֆիկական վերլուծությունների մեթոդները: Իրականացվել է նաև ՀՀ-ում «Հիմքային եկամտի» ներդրման հետ կապված բնակչության դիրքորոշման սոցիալաբանական:

Ատենախոսության գիտական նորույթը: Կատարված հետազոտության ընթացքում ձեռք են բերվել գիտական մի շարք արդյունքներ, որոնցից նորույթ են հետևյալները.

- Քննարկվել է «Հիմքային եկամտի» ազդեցությունը հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման վրա: Նշվել են դրա դրական և բացասական հետևանքները:
- Հիմնավորվել է «Հիմքային եկամտի» դերը, որպես ՀՀ-ում կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղի, ինչպես նաև դրա առավելությունը սոցիալական այլ ծրագրերի նկատմամբ:
- Սոցիալական հարցումների միջոցով բացահայտվել է «Հիմքային եկամտի» ներդրման նկատմամբ բնակչության վերաբերմունքը և հիմնավորվել է դրա նախընտրելիությունը բազմաթիվ այլ սոցիալական ծրագրերի համեմատ:
- Առաջարկվել են «Հիմքային եկամտի» իրացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների աղբյուրները, «Հիմքային եկամտի» կիրառման միջոցով ՀՀ-ում մեղմացնել աղքատությունը, ինչպես նաև կատարվել է դրանց քանակական գնահատումը:

Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունում կատարված հետազոտությունները և առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ-ում սոցիալական ծրագրերի մշակման և ներդրման, «Հիմքային եկամտի» վերաբերյալ պետական ծրագրերի և ռազմավարության մշակման ոլորտներում: Ատենախոսության գիտական արդյունքները կարող են օգտագործվել նաև ՀՀ օրենսդիր և գործադիր մարմիններում սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման քաղաքականության մշակման համար:

Աշխատանքի գործնական արժեքը և արդյունքների իրականացումը:

Աշխատանքում առկա տեսական եզրակացությունները և գործնական առաջարկությունները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետությունում «Հիմքային եկամտի» կիրառման ժամանակ:

Աշխատանքի փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության գործնական նշանակություն ունեցող հիմնական դրույթները կիրառվել են տարբեր երկրներում, քննարկվել են «Հիմքային եկամտ» ծրագրի վերաբերյալ գիտաժողովում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են վեց հոդվածում:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսության ծավալը և կառուցվածքը պայմանավորված են առաջադրված նպատակով և խնդիրներով, ուսումնասիրության մակարդակով: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված 123 անուն գրականության

ցանկից: Ատենախոսությունը բաղկացած է 118 էջից, ներառում է 20 աղյուսակ, 22 գծանկար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության հիմնական նպատակն ու առաջադրվող խնդիրները, հետազոտության առարկան և օբյեկտը, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, աշխատանքի տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ ««Հիմքային եկամտի» հասկացության հիմնադրույթները և կիրառման միջազգային փորձը» գլխում քննարկվել է «Հիմքային եկամուտ» հասկացության մանրակրկիտ ուսումնասիրությունը: Քննարկվել են «Հիմքային եկամտին» առնչվող վերջին պատմական միտումները և հղումները, որոնք կատարվել են տարբեր քաղաքական գործիչների, տնտեսագետների և փիլիսոփաների կողմից: Ամփոփվել են նախկինում «Հիմքային եկամտի» ֆինանսավորման տարբեր աղբյուրները և դրանց կիրառելի լինելը ՀՀ-ում (հիմք ընդունելով հանրային արտադրության մակարդակը և/կամ առկա բնական պաշարները): Լուսաբանվել է այն միջազգային կազմակերպությունների գործունեությունը, որոնք զբաղվում են «Հիմքային եկամտի» ուսումնասիրությամբ ժամանակակից աշխարհում: Այդ կազմակերպություններից մի քանիսը պարզապես հետազոտում են գաղափարը, մինչդեռ մյուսները փորձում են այդ գաղափարախոսությունը առաջ մղել և կիրառել տարբեր երկրներում: Այնուհետև քննարկվել և վերլուծվել են այն երկրների օրինակները, որտեղ «Հիմքային եկամուտը» ներկայացվել և փորձարկվել է կամ էլ դեռ ընթացքի մեջ է:

Պարտադիր «Հիմքային եկամուտը» սոցիալական անվտանգության համակարգ է, երբ պետության բոլոր քաղաքացիները պարբերաբար ստանում են որոշակի գումար: Քաղաքացիները կարող են ստանալ պարտադիր «Հիմքային եկամուտ» (ՊՀԵ), որպես իրենց այլ եկամուտների հավելում: Նկատի է առնվում, որ դա պետության պարտքն է իր քաղաքացիների նկատմամբ: Ըստ որում, ՊՀԵ-ն բարեկեցություն ապահովող ծրագիր չէ, քանի որ դրա հիմնական նպատակը հանրության յուրաքանչյուր անդամին իր նվազագույն կարիքները հոգալու հնարավորություն տալն է՝ կապված ապրելավայրի, սննդի և բժշկական օգնության հետ: «Հիմքային եկամտի» նպատակն է՝ երաշխավորել քաղաքացիների արժանապատիվ ապրելակերպը: Երբ քաղաքացին ձեռքագատվի բնակության, սննդի

ամենօրյա խնդիրներից, նա այլևս չի վախենա գոյատևման խնդրի առջև կանգնելուց³: Այս գաղափարի գլխավոր նպատակը աղքատ մարդկանց կյանքն ավելի բարեկեցիկ և ապահով դարձնելն է:

Առաջին անգամ այս գաղափարը ներկայացվել է պորտուգալացի ճանապարհորդ Ռաֆայել Նոնսենսոյի կողմից 16-րդ դարում⁴: Այդ ժամանակից մինչև այժմ այս գաղափարը քննարկել են բազմաթիվ փիլիսոփաներ, պատմաբաններ, քաղաքագետներ և տնտեսագետներ աշխարհի զանազան երկրներում: Վերջին տասնամյակներում շատ եվրոպական պետություններ, ինչպիսիք են՝ Միացյալ Թագավորությունը, Իռլանդիան, Իսլանդիան, Բելգիան, Շվեյցարիան, Դանիան, Լյուքսեմբուրգը, Գերմանիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Հունաստանը, Կիպրոսը, Իսպանիան, Նիդերլանդները, Նորվեգիան, Շվեդիան, Հունգարիան և Չեխիայի Հանրապետությունը հնարավոր են համարել «Հիմքային եկամտի» կիրառությունը իրենց երկրներում: 2017 թ. -ից «Հիմքային եկամտի» գաղափարը սկսվել է նաև լուրջ քննարկվել Ռուսաստանի Դաշնությունում: Նամիբիայում և Հնդկաստանում կատարվել էին հաջող կիրառման «Հիմքային եկամտի» ծրագրի փորձեր, որոնց մանրամասն ուսումնասիրությունը քննարկվել է և ծրագրի արդյունքները՝ ամփոփվել:

«Հիմքային եկամտի» մատչելիությունը կախված է մի շարք գործոններից: Այն հարկերի բարձրացման ժամանակ փոխարինում է հանրային ծառայությունների ծախսերին: Եվ հաշվի առնելով այն փաստը, որ «Հիմքային եկամուտը» կնվազեցնի հանցագործությունների քանակը, դրանից կնվազեն նաև ոստիկանության և արդարադատության կողմից պահանջվող պարտադիր ծախսերը:

Տարբեր ժամանակներում առաջարկվել են «Հիմքային եկամուտի» ֆինանսավորման տարբեր միջոցներ: Դրանց թվին է պատկանում հանրային ձեռնարկությունների ունեցած շահույթը, որը կոչվում է սոցիալական շահութաբաժին կամ քաղաքացիների շահութաբաժին: Կապիտալիստական համակարգն առաջարկում է «Հիմքային եկամուտը» ֆինանսավորել տարբեր եղանակներով առաջացած հասույթի հարկերի գանձումից:

Առաջին գլխում վերլուծված և ամփոփված են «Հիմքային եկամտի» առավելությունները և թերությունները ըստ տնտեսագետների, քաղաքական գործիչների և փիլիսոփաների «քննարկումների», ինչպես նաև ըստ փորձերի արդյունքների (աղյուսակ 1):

³ G.Standing, Basic Income: A 21st Century Economic Right, -Institut de Drets Humans de Catalunya, http://www.guystanding.com/files/documents/CDHE_Standing.pdf

⁴ BIEN website, History of Basic Income, <http://basicincome.org/basic-income/history/>

«Հիմքային եկամտի» դրական և բացասական կողմերը.

Դրական	Բացասական
Ազատ ընտրության հնարավորություն	Անմատչելիություն
Կարգավորված աշխատանքի շուկա	Ինչ-որ մի բան՝ ոչնչի համար
Նորարարություն և փոքր բիզնեսներ	Ծուլություն
Ավելի լավ կապիտալիստական հասարակություն	Գնաճ
Կայուն տնտեսություն	Արհեստական գնաճ
Հանցագործությունների նվազում	Գումար այն կիրառելու համար
Բյուրոկրատիայի նվազում	Ներգաղթ դեպի այդ երկիր
Տեխնոլոգիա և կայուն եկամուտ	
Սոցիալական արդարություն	
Բարեկեցություն	
Կրթության մակարդակի բարձրացում	
Բարձր ծնելիություն	
Կանանց աշխատելու հնարավորություն	
Հարստության վերաբաշխում	

Դրական արդյունքներն ակնհայտորեն փոխկապակցված են. աղքատության մակարդակը, սովը, հանցագործությունը և խմիչքի չարաշահումները նվազել են: Ընտանիքներն իրենց ավելի պաշտպանված են զգում, ծնողները կարողանում են ավելի շատ ժամանակ հատկացնել իրենց երեխաներին, որի արդյունքում երեխաները ավելի շփվող են դառնում, ավելի երջանիկ են իրենց զգում և ավելի առողջ փոխհարաբերություններ են ստեղծվում: Առօրյա կյանքում ծնողներն ավելի հանգիստ կլինեն, որն էլ անմիջականորեն կանդրադառնա երեխաների վրա: Կենցաղի, սննդի և հագուստի ծախսերը որոշակիորեն կկրճատվեն, և ծնողները այլևս չեն մտահոգվի այդ հարցերով: Ինչպես արդեն նշվել է, այդ օգնության շնորհիվ ավելի շատ երեխաներ կհաճախեն դպրոց: Երջանիկ և կրթված երեխաները բարեկեցիկ հանրության հիմքն են:

Երբ մարդկանց նվազագույն ֆինանսական կարիքներն ապահովված են, և կենցաղի ծախսերը նրանք կարողանում են հոգալ, հանրությունը սկսում է ավելի կայուն զարգանալ, մարդիկ ավելի ինքնավստահ են դառնում: Նրանք կարող են ավելի շատ կենտրոնանալ այն աշխատանքի վրա, որ կցանկանային ունենալ: Այսպիսով, կարելի է ամփոփել, որ ոչ միայն ֆինանսապես, այլևս հոգեբանորեն սա հանրության

համար խնդրի լուծումն է: «Հիմքային եկամտի» կիրառությունը կարող է հիմք հանդիսանալ վաղվա լավ սերունդ ունենալու համար:

Ատենախոսության երկրորդ՝ «Բնակչության աղքատության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. «Հիմքային եկամուտ» գաղափարի ներդրումը, որպես աղքատության հաղթահարման երաշխիք» գլխում անդրադարձ է կատարվել ՀՀ տնտեսական վիճակին: Քննարկվել է ՀՀ տնտեսության վիճակը անկախությունից առաջ, Խորհրդային Միության փլուզումից հետո և ներկա ժամանակում: Այնուհետև, վերլուծվել են հիմնական տնտեսական ցուցանիշները, ինչպես օրինակ առևտրի դեֆիցիտը, պետական պարտքը, կառավարության ծախսերը, սպառողական գների ինդեքսը, դրամական փոխանցումները և զբոսաշրջությունը բնութագրող զարգացումները:

Աղյուսակ 2.

Աղքատության մակարդակը ՀՀ-ում 2008 -2016 թվականներին մեկ ամսում մեկ չափահաս մարդու հաշվով, ՀՀ դրամով⁵

Աղքատության մակարդակը	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Սննդի կամ ծայրահեղ աղքատության մակարդակը	17,644	17,483	19,126	21,306	21,732	22,993	23,384	24,109	23,313
Աղքատության գծից ներքև	24,388	25,217	27,410	29,856	30,547	32,318	33,101	34,234	33,418
Աղքատության գծից վերև	29,903	30,920	33,517	36,158	37,044	39,193	40,264	41,698	40,867

Աղյուսակ 2-ից երևում է, որ չնայած տնտեսական առաջընթացին, միլիարդավոր դոլարների փոխանցումներին, խոշոր վարկերին և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող դրամաշնորհներին՝ Հայաստանի Հանրապետությունում աղքատության հետ կապված խնդիրները արդիական են: Սա երաշխավորում է մի ծրագրի կիրառություն, որը նախկինում չի կիրառվել, սակայն որն իր հետ կարող է բերել հսկայական համակարգային փոփոխություններ, աղքատության մակարդակի նվազում, հայ հանրության մեջ սոցիալական արդարության մակարդակի բարձրացում:

⁵ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կայք, <http://www.armstat.am/file/doc/99498923.pdf>

Հեղինակն ուսումնասիրել է ՀՀ սոցիալական ծրագրերը, ծախսված գումարի չափը և այդ ծրագրերից հասարակության ունեցած օգուտը: Այս տվյալները օգտագործվել են «Հիմքային եկամտի» հաշվարկների ընթացքում: Արդյունքում, ամփոփելով ՀՀ տնտեսական վիճակը, աղքատության մակարդակը, առկա սոցիալական ծրագրերը և տնտեսական գործունեության այլ ոլորտները, նշվել է, որ «Հիմքային եկամտի» կիրառության հարցը ՀՀ-ում ունի սոցիալ-տնտեսական մեծ հնչեղություն:

Քննարկվել են նաև ՀՀ բնակչության թվաքանակի փոփոխությունները, աշխատավարձը, աղքատությունը և թերսնուցումը և դրա ունեցած ազդեցությունը հասարակության վրա: Քննարկելով նվազագույն աշխատավարձի մեծության չափը եզրակացվել է, որ ընդհանուր առմամբ այն բարձրացել է, սակայն ուսումնասիրելով նվազագույն աշխատավարձով գոյատևելու հնարավորությունը ՀՀ-ում՝ հեղինակը եզրակացնում է, որ նվազագույն աշխատավարձը բավարար չէ նույնիսկ կենսաապահովման զամբյուղի ապահովման համար (աղյուսակ 3):

Աղյուսակ 3.

Մննդամթերքի և ծխախոտի գնման ծախսերի կառուցվածքը ՀՀ-ում՝ ընդամենի նկատմամբ, %⁶

	1999	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
Մսնդամթերք	87.7	87.2	87.2	88.0	86.8	86.3	87.3	87.0	86.9	86.9	87.6	86.4	86.7	86.4	85.2
Հաց և հացամթերք	32.2	25.6	27.4	23.7	21.0	20.3	22.7	22.5	19.9	20.1	20.7	21.2	19.7	21.2	19.7
Միս, թռչուն և ձուկ	14.2	18.7	17.5	19.9	20.7	20.5	20.0	20.6	20.5	20.5	22.2	22.0	21.7	22.0	21.0
Կաթնամթերք և ծուլ	8.7	10.2	10.5	11.3	11.0	11.2	11.1	11.3	10.8	10.7	11.2	11.2	11.9	11.2	11.6
Կարագ և յուղ	9.3	7.6	7.3	6.8	6.3	6.1	6.7	6.4	6.1	6.1	6.2	5.9	6.0	5.9	6.0
Մրգեր և բանջարեղեն	13.4	14.7	14.5	15.6	17.5	17.7	16.6	17.2	18.7	18.7	17.2	17.1	18.4	17.1	18.0
Ծաքար, թեյ, սուրճ և քաղցրեղեն	9.1	9.0	8.4	9.0	8.7	8.7	8.5	9.4	9.2	9.2	8.2	7.4	7.2	7.4	7.5
Ոչ ակտիվային խմիչքներ	0.5	1.1	1.0	1.2	1.0	1.3	1.1	1.0	1.1	1.1	1.2	1.1	1.2	1.1	1.0
Այլ սննդամթերք	0.3	0.6	0.6	0.5	0.5	0.5	0.5	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.5
Ալկոհոլային խմիչքներ	1.9	1.6	1.6	1.6	1.7	1.7	1.5	1.6	1.8	1.8	1.5	1.4	1.3	1.4	1.2
Մոունդ և խմիչք տանից դուրս	1.6	2.3	2.5	2.1	2.8	4	3.4	3.1	3.5	3.8	2.9	3	3.6	3.9	5.4
Ծխախոտեղեն	8.8	8.9	8.7	8.3	8.7	8	7.8	8.3	7.8	7.8	8	8.3	8.4	8.3	8.1

⁶ Աղբյուրը. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր. , ՀՀ ԱՎԾ, 2017, էջ 104, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր. ,ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 105, Հայաստանի վիճակագրական

Թերսնման վերլուծության արդյունքում արվել է հետևյալ եզրակացությունը⁷.

1. Հայաստանում հինգ տարեկանից փոքր երեխաների 5.3%-ի կշիռը (քաշը) նորմայից ցածր է:
2. Կարճահասակությունը (քրոնիկ թերսնումը երկարաժամկետ թերսնման արդյունք է) սպառնում է հայ երեխաներից յուրաքանչյուր հինգերորդին: Կարճահասակ երեխաներն ունեն ընդհանուր համաչափ կառուցվածք, սակայն նրանց հասակը չի համապատասխանում իրենց տարիքին: Ձեռք բերված կարճահասակությունը և դրա հետևանքները դառնում են մշտական, և այդ երեխաները հետագայում այլևս չեն կարողանա ունենալ այնպիսի հասակ, որը կհամապատասխանի իրենց մարմնի կշռին: Որոշակի տարիքի հասնելուց հետո այդ երեխաների մոտ կարճահասակության հետևանքները դառնում են անդառնալի: Այն կարող է ազդել նաև երեխաների ճանաչողական ունակությունների վրա, և նրանք ավելի խոցելի են դառնում հիվանդությունների նկատմամբ:
3. Աղքատ ընտանիքների երեխաներն ու մայրերը թերսնված են: Թերսնված մոր երեխան ավելի շատ է հիվանդանում: Թերսնումը կամ էլ ոչ ճիշտ դիետան կարող է առողջական խնդիրներ առաջացնել:
4. Թերսնումը սպառնալիք է Հայաստանի ազգային անվտագությանը: Բարձր միգրացիան, որը տեղի ունեցավ վերջին քսանհինգ տարվա ընթացքում, անդառնալի հետևանքներ ունեցավ ոչ միայն Հայաստանի Հանրապետության բնակչության թվաքանակի կրճատման, այլ նաև ծնելիության մակարդակի նվազման վրա:
5. Հայաստանում հինգ տարեկանից ցածր երեխաների 16.8%-ը նորմալ կշիռ չունի (ըստ Համաշխարհային Բանկի տվյալների)⁸ ⁹: Կշռի և գիրության խնդիրները առկա են ոչ միայն բարձր եկամուտ ունեցող երկրներում կամ բարձր աշխատավարձով ընտանիքներում: Երեխաների գիրության և կշռի խնդիրները 30%-ով բարձր են ցածր և միջին աշխատավարձով երկրներում: Սրա հիմնական պատճառն այն է, որ վերամշակված սննդի, հացի և կարտոֆիլի համեմատ թարմ մրգերը և բանջարեղենը չափազանց թանկ են:

⁷ <http://ebrary.ifpri.org/utils/getfile/collection/p15738coll2/id/130354/filename/130565.pdf>

⁸ WorldBank, Social Snapshot and Poverty in Armenia - Main Outcomes of 2014 Household Integrated Living Conditions Survey, -WorldBank website, -November 2015, -YEREVAN, <http://www.worldbank.org/en/news/press-release/2015/11/23/social-snapshot-and-poverty-in-armenia-main-outcomes-of-2014-household-integrated-living-conditions-survey>

⁹ GLOBAL NUTRITIENT REPORT, FROM PROMISE TO IMPACT ENDING MALNUTRITIENT BY 2030, <http://ebrary.ifpri.org/utils/getfile/collection/p15738coll2/id/130354/filename/130565.pdf>

ՀՀ-ում պետական բյուջեից իրականացվում են ֆինանսավորվող շուրջ 70 տարբեր ծրագրեր¹⁰: Վերլուծությունից երևում է, որ թեև գոյություն ունի կայուն սոցիալական անվտանգության համակարգ, սակայն այն չի կարողանում լուծել աղքատության և թերսնման խնդիրները ՀՀ-ում: Ակնհայտ է այն փաստը, որ անհրաժեշտ է վերանայել աղքատության նվազեցման ուղղությամբ տարվող քաղաքականությունը:

Ատենախոսության երրորդ՝ «Բնակչության «Հիմքային եկամտի» ապահովման հիմնական ուղիները Հայաստանի Հանրապետությունում» գլուխը նվիրված է ՀՀ-ում «Հիմքային եկամտի» կիրառման հնարավորությունների ուսումնասիրությանը: Այս գլխում փորձ է արվել ցույց տալ, որ «Հիմքային եկամուտը» հնարավոր է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ (2016-2017թթ.) բյուջեն մանրամասն ուսումնասիրելուց հետո, առաջարկվել են նաև այլ աղբյուրներ՝ հաշվարկվել է «Հիմքային եկամտի» համար անհրաժեշտ գումարի չափը:

Հետազոտվել են «Հիմքային եկամտի» ֆինանսավորման հնարավորությունները ՀՀ-ում: Հաշվարկներից պարզ է դառնում, որ ֆինանսավորման համար անհրաժեշտ լրացուցիչ գումարների կարիք կա: Խնդիրը լուծելու նպատակով փորձ է արվել աղքատության մեջ գտնվող մարդկանց տարանջատել ծայրահեղ աղքատության մեջ գտնվողներից: Մարդկանց այս երկու խումբը առանձնացնելու համար անհրաժեշտություն կլինի ստեղծել որոշակի մեխանիզմ, և վարչական օգնության կարիք կառաջանա: Չափազանց կարևոր է այն, որ «Հիմքային եկամտից» հատկացվող գումարը ծախսվի ճիշտ ձևով՝ «առավել խոցելի» մարդկանց համար:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ամսական նվազագույն աշխատավարձը կազմում է 55,000 դրամ: Սկզբնական շրջանում, որպես «Հիմքային եկամտի» գումար դիտարկվել է 2016 թ. չորրորդ եռամսյակի պարենային զամբյուղի արժեքը, որը կազմել էր 30,934 դրամ¹¹: Այս գումարի շնորհիվ անհատը կկարողանա հոգալ հիմնական սննդի կարիքները, սակայն այն բավարար չէ, արժանապատիվ և անվտանգ կենսապայմաններ ապահովելու համար: Չկա մտավախության պատճառ, որ ստանալով այդ գումարը՝ աշխատունակ բնակչությունը չի աշխատի, հակառակը՝ այն կնպաստի, որ նրանք աշխատեն և ավելի բարեկեցիկ կյանք ունենան:

¹⁰ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և արդյունավետության գնահատման համակարգի ներդրման ընթացքի և հետագա աշխատանքների մասին, -2014, <http://mlsa.am/wp-content/uploads/2014/01/S.Harutyunyan-4.pdf>

¹¹ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կայք, <http://armstat.am/am/?module=publications&mid=8&id=1877>

Ապահովված լինելով սննդի համար անհրաժեշտ գումարով՝ յուրաքանչյուր անձ կմտածի աշխատանք գտնելու մասին:

Որպես տեսական հաշվարկների ամփոփում ստացվել է հետևյալ պատկերը.

- ամսական 37,514 դրամ հատկացնել շատ կամ ծայրահեղ աղքատության մեջ գտնվող յուրաքանչյուր մարդուն (բնակչության 9.8%),

ամսական 14,316 դրամ հատկացնել յուրաքանչյուր աղքատ մարդու (բնակչության 20.2%),

կամ

- ամսական 21,894 դրամ հատկացնել յուրաքանչյուր աղքատ մարդու (բնակչության 30%):

Կատարած հաշվարկներն ավելի պատկերավոր դարձնելու համար տվյալները ներկայացվել են հետևյալ ձևով.

Աղյուսակ 4.

Աղքատության մեջ գտնվող յուրաքանչյուր անձի համար հաշվարկված հնարավոր «Հիմքային եկամտի» գումարը, դրամ.

Ֆինանսավորման աղբյուրները	Տարբերակ 1		Տարբերակ 2
	Շատ և ծայրահեղ աղքատ մարդիկ (9.8%)	Աղքատ մարդիկ (20.2%)	Աղքատ մարդիկ (30%)
Սոցիալական անվտանգություն	10,324	10,324	10,324
Հարկեր	23,198		7,578
Պետբյուջեի այլ միջոցներ	257	257	257
Զբոսաշրջություն	325	325	325
Հայկական սփյուռք հովանավորում	3,410	3,410	3,410
Ընդհանուր	37,514	14,316	21,894

Հաշվարկված «Հայկական սփյուռք հովանավորում» ծրագրի հիմքում դրվել էր այն մոտեցումը, որ՝ ելնելով այն կարգադրույթից, որ օրինակ ԱՄՆ-ում 1 ժամվա համար սահմանված նվազագույն աշխատավարձը 7.25 ԱՄՆ դոլար է: Հեղինակը ելնում է այն ենթադրությունից, որ հայ համայնքի նույնիսկ ամենացածր աշխատավարձ ստացող անդամների մեծ մասը պատրաստ կլինի ամսական աշխատի 1-2 ժամ ՀՀ աղքատության ծրագիրը հովանավորելու համար:

Հարկավոր է նշել, որ զբոսաշրջություն և հայկական սփյուռք հովանավորման աղբյուրներից ստացած գումարը ներկայացվում է որպես նոր դրամական ներհոսք, որը կտրամադրվի այն անձանց, ովքեր անմիջապես այն կծախսեն, իրենց առօրյա հոգսերը հոգալու համար, որն իր հերթին կնպաստի ՀՆԱ-ի աճին և տնտեսության զարգացմանը: Այս գումարը կկազմի ՀՆԱ-ի 0.8% (ՀՆԱ-ն 2016թ. 10.56 միլիարդ ԱՄՆ դոլար): Այն հաշվարկված է հետևյալ կերպ.

Զբոսաշրջություն = 3,500,000,000 դրամ, որն համապատասխանում է 7,368,421 ԱՄՆ դոլարին:

Հայկական սփյուռք հովանավորում = 77,400,000 ԱՄՆ դոլար:

$7,368,421 + 77,400,000 = 84,768,421$ ԱՄՆ դոլար :

Տեղեկատվական տեխնոլոգիաների դարում կարծում ենք, որ հեշտությամբ կարելի է հիմնել «Հիմքային եկամուտ» ծրագրի ինտերնետային կայք, որտեղ պարզ և հասկանալի կբացատրվի «Հիմքային եկամտի» գաղափարի և ծրագրի ցուցանիշները, որոնք սփյուռքի ներկայացուցիչներին վստահություն կներշնչի, որ իրենց նվիրաբերված գումարը անմիջապես կօգտագործվի ըստ ներկայացված նպատակի, այսինքն՝ աղքատության հիմնախնդիրները լուծելու համար: Նույն կայքում հնարավոր կլինի սփյուռքից յուրաքանչյուր ցանկացող անձին գրանցվել և նրա կրեդիտ քարտի հաշվով ամսական ավտոմատ կերպով գանձվի առաջարկված գումարներից որևէ մեկը:

Արվել է եզրակացություն, որ առանց արտաքին օգնության, (օրինակ՝ միջազգային կազմակերպությունների), հնարավոր չի լինի ամսական յուրաքանչյուր մարդու հատկացնել ցանկալի 30,934 դրամ գումարը:


Իրականացվել է հարցում բնակիչների շրջանում, որպեսզի պարզվի՝ արդյոք նրանք կգերադասեն «Հիմքային եկամուտը», թե սոցիալական ծրագրերից ստացված օգուտը: Հարցման արդյունքները ցույց են տվել, որ հարցվածների մեծ մասը ներկայումս չի օգտվում որևէ սոցիալական ծառայությունից և կնախընտրեր այդ ծրագրերի փոխարեն օգտվել «Հիմքային եկամտից»: Հարցումը կրում էր կամավոր

բնույթ, և հիմնականում հարցերին պատասխանել են 31-45 տարեկան անձինք: Հիմնվելով տվյալների արդյունքների վրա՝ պարզ է դարձել, որ երիտասարդ սերունդը՝ 18-30 տարեկան, ինչպես նաև 31-45 տարեկան անձինք չեն խրախուսում սոցիալական ծրագրերը:

Այս փաստը հիմք է ծառայում եզրակացնելու, որ սոցիալական ծառայություններից գլխավորապես օգտվում են մեծահասակները: Հայաստանի Հանրապետությունում «Հիմքային եկամտի» համար անհրաժեշտ գումարը հաշվարկելիս պետական բյուջեից ծերերին և հաշմանդամություն ունեցող մարդկանց տրամադրվող գումարը չի ներառվել: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ մեծահասակները, ովքեր օգտվում էին սոցիալական ծրագրերից, գերադասում են «Հիմքային եկամտի» շնորհիվ ստանալ որոշակի հավելյալ գումար:

Հարցման մյուս ոլորտը, որին անդրադարձ է կատարվել այն է, որ հավելյալ փողը «հաճույք»-ի համար ծափխսելու դրական պատասխանը կազմել է շատ քիչ քանակություն (14.29%): Սա նշանակում է, որ նրանք այդ գումարը խելամիտ կծախսեն, և այն պարզապես վատնելու փոխարեն՝ որոշակի օգուտ կստանան: Պատասխաններից ակնհայտ էր, որ երիտասարդ սերունդը և 31-45 տարեկան մարդիկ բավականին մեծ պատասխանատվությամբ են մոտենում այդ գումարը ճիշտ ծախսելու խնդրին: Ամենաշատ ստացված պատասխաններն էին՝ կենսապայմանների բարելավումը և առողջապահությունը:

Ստացված արդյունքներից ակնհայտ է, որ մարդիկ սոցիալական ծրագրերի փոխարեն ավելի շատ կցանկանային օգտվել «Հիմքային եկամտից»: Նման աջակցությունը մարդկանց աչքերում ավելի է արժևորում «Հիմքային եկամտի» գաղափարը: Ընդհանուր առմամբ, հարցումների հիման վրա եզրակացություն է արվել, որ Հայաստանի Հանրապետությունում սոցիալական ծրագրերի փոխարեն հնարավոր է կիրառել «Հիմքային եկամուտը», որը հանրության կողմից կարող է ընդունվել ավելի մեծ ցանկությամբ, քան տալ օգնությունները (տես գծապատկեր 1-ը):



Գծապատկեր 1. Հարց 3. Եթե Դուք ստանաք «Հիմքային եկամուտ», ինչպե՞ս կօգտագործեք այն:

Որպես վերջաբան կցանկանայինք, շեշտը դնել նրա վրա, որ առանց կառավարության բարեփոխումների և փոքր բիզնեսների համար նպաստավոր միջավայր ստեղծելու աջակցության՝ «Հիմքային եկամուտ» գաղափարը չի կարող իրագործվել և չի կարող կայուն տեղ զբաղեցնել ՀՀ-ում: Հասարակությանը պետք է աջակցել, որպեսզի աղքատությունը նվազի և տնտեսությունը ծաղկի: «Հիմքային եկամուտ» ծրագրով հնարավոր է ապահովել բնակչության զգալի մի մասը, որոնք աղքատության մեջ են և վստահ կլինեն ստանալու որոշակի գումար, որը կկարողանան օգտագործել իրենց առաջնային կարիքների համար: Յուրաքանչյուր անձ հնարավորություն կունենա որոշել, թե ինչպես օգտագործել ստացած գումարը առանց սահմանափակումների:

Հեղինակը կարևորում է, որ ՀՀ-ում «Հիմքային եկամուտը» հնարավոր է պլանավորել, հաշվարկել և կիրառել: Ֆինանսավորման հետ կապված առկա են բազմաթիվ խոչընդոտներ, սակայն մյուս երկրների փորձը ցույց է տվել, որ դրա կիրառումը շատ դրական արդյունքներ ունի, որն էլ իր հերթին նպաստում է տնտեսության առաջընթացին և զարգացմանը, ինչպես նաև աղքատության ընդհանուր մակարդակի նվազմանը: Ընդհանուր առմամբ, կարող ենք եզրակացնել, որ ՀՀ սոցիալական ծրագրերի փոխարեն հնարավոր է կիրառել «Հիմքային եկամուտը», և դա հասարակության կողմից ավելի շատ կողջունվի:

«Եզրակացություններ» բաժնում ներկայացվել են ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների, հետազոտության և արված վերլուծությունների արդյունքների հիման վրա ստացած հետևյալ եզրահանգումները.

1. Հետազոտվել է «Հիմքային եկամուտ» գաղափարը դրա գոյության ամբողջ ընթացքում: Հետազոտության ընթացքում վերլուծվել են «Հիմքային եկամտի» վերաբերյալ համապատասխան գիտական և պատմական նյութեր: *Ողջ աշխարհում արդեն առկա են փորձարկված, վերլուծված և ապացուցված գաղափարներ:*
2. Վերլուծվել են «Հիմքային եկամտի» առավելությունները և թերությունները ըստ փիլիսոփաների, քաղաքական գործիչների, տնտեսագետների տեսակետների, ինչպես նաև ողջ աշխարհում առկա փորձի: *Կարելի է եզրակացնել, որ այն ունի բազում դրական արդյունքներ:*
3. Կարևորվել են այն երկրների արդյունքները, որտեղ «Հիմքային եկամուտը» ներկայացվել, փորձարկվել է և դեռ գոյություն ունի: Աշխարհի տարբեր երկրներում իրականացրած փորձը ցույց է տվել բազմաթիվ դրական արդյունքներ: *«Հիմքային եկամուտը» ենթադրվում է կիրառել ոչ միայն աղքատ երկրներում, ինչպես օրինակ՝ Հնդկաստանում կամ Նամիբիայում, այլ նաև զարգացած, կապիտալիստական և արդյունաբերական երկրներում, ինչպիսիք են՝ Ֆրանսիան, Գերմանիան, Ֆինլանդիան, Կանադան և շատ այլ երկրներ: Անկախ նրանից, թե տվյալ պետությունը «Առաջին աշխարհի», թե «Երրորդ աշխարհի» երկիր է, այն փորձում է ներկայացնել տնտեսական զարգացման նոր ուղի: Այս նոր ուղու տարբերակ է «Հիմքային եկամուտ» ծրագիրը, որն իրագործելի է Հայաստանի Հանրապետությունում:*
4. Քննարկվել են տարբեր տնտեսական ցուցանիշների (ՀՆԱ-ն, առևտրի պակասուրդը (դեֆիցիտը), կառավարության պարտքը, սպառողական գների ինդեքսը, դրամական փոխանցումները և զբոսաշրջությունը) պատմական և ներկայիս միտումները: Ուսումնասիրվել է՝ Հայաստանի աղքատ բնակչության թերսնման խնդիրը, ինչպես նաև դրա ունեցած ազդեցությանը ներկա և ապագա սերնդի վրա: Ըստ վերլուծության, *Հայաստանի Հանրապետությունում աղքատության դեմ պայքարի համար անհրաժեշտ են այլ տնտեսական լուծումներ, որոնցից մեկը՝ «Հիմքային եկամուտն» է: Բացահայտվել է, որ Հայաստանի քաղաքացիները ավելի շատ կշահեն «Հիմքային եկամտից», քան մյուս նպաստներից:*
5. Կատարվել է ՀՀ-ում «Հիմքային եկամտի» ներդրման հնարավորությունների վերաբերյալ ուսումնասիրություն (հարցումների միջոցով) և տրվել են

աղքատության դեմ պայքարի որոշակի առաջարկներ: «Հիմքային եկամուտ» գաղափարն ունի նաև հակառակորդներ: «Հիմքային եկամուտի» համար կատարված հաշվարկները ենթադրում են որոշակի հետևություններ, որոնք ներկայումս «անհանգստացնում» են ազատական տնտեսության կողմնակիցներն: *Անհրաժեշտ են այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն սոցիալական արդարություն հաստատելուն:* Շատ քաղաքական գործիչներ, տնտեսագետներ և փիլիսոփաներ դեմ են «Հիմքային եկամուտ» գաղափարին, քանի որ կարծում են, որ ստանալով անվերադարձ փողեր, մարդիկ այլևս չեն ուզենա աշխատել, որն էլ իր հերթին բացասաբար կանդաղադառնա հանրության վրա: Հաջորդ կարևոր կետն այն է, որ «Հիմքային եկամուտը» հնարավոր չէ կյանքում կենսագործել, և դրանով իսկ առանց բարեփոխումների կատարելու ու փոքր բիզնեսների համար նպաստավոր միջավայր ստեղծել: Հայաստանի Հանրապետությունում ապրող և աղքատության մեջ գտնվող մարդկանց համար «Հիմքային եկամտի» տված օգուտը կարող է շատ մեծ լինել: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն այնքան մեծ չէ, որ այն կարողանա ֆինանսավորել «Հիմքային եկամուտը»: Միակ հնարավոր լուծումը «Հիմքային եկամուտ» ծրագրի համար նախատեսված գումարի չափը մեծացնելն է: Այսօր աշխարհում սոցիալական արդարությանը նպաստելու ու աղքատության դեմ պայքարելու նոր շարժում է սկսվել: Ընդհանուր առմամբ, «Հիմքային եկամտի» կիրառումը ավելի արդյունավետ կլինի, քան առկա ծրագրերը: Ֆինանսավորումը իր հերթին կազդի ծրագրի ժողովրդականության և տնտեսական կայունության վրա. մինչդեռ «Հիմքային եկամտի» մակարդակը ուղղակիորեն կազդի անհատների վարքագծի վրա: *Հիմք ընդունելով կատարած վերլուծությունները՝ հաշվարկվել է, որ «Հիմքային եկամտի» կիրառումը միայն օգուտ կտա և չի վնասի Հայաստանի Հանրապետության տնտեսությանը:* Այն նաև կկրճատի աղքատության մակարդակը և հետևաբար այն մարդկանց արտագաղթը, ովքեր լքում են երկիրը, որպեսզի այլ երկրներում աշխատանք փնտրեն, ապահով և ավելի բարեկեցիկ կյանք ունենան:

6. Հայաստանի Հանրապետությունում աղքատության մակարդակը դեռևս շատ բարձր է: Եթե անվերադարձ փող ստանալու համար անհրաժեշտ լինի բնակչությանը տարբերակել ըստ որոշ չափանիշների, ապա շատերը կնվազեցնեն իրենց աշխատած գումարը, որպեսզի համապատասխանեն այդ չափանիշներին և ստանան այդ գումարը: Այդպիսի մոտեցումը կհանգեցնի աղքատության աճին և ավելի շատ պահանջներ կներկայացնի «Հիմքային եկամուտ» ծրագրին: Այլընտրանքային փաստարկ կարող է հանդիսանալ այն, որ շատ մարդիկ աշխատում են՝ ստանալով նվազագույն աշխատավարձ և մոտ են աղքատության շեմը հատելուն: Սակայն այս մարդիկ գերադասում են

աշխատել՝ ի տարբերություն այն չաշխատող մարդկանց, ովքեր հույսները դնում են տարբեր նպաստների և սոցիալական աջակցության ծրագրերի վրա: Այս մարդիկ միայն կշահեն «Հիմքային եկամտից», համակարգին չեն ստի և կշարունակեն աշխատել՝ իրենց կյանքը ավելի բարեկեցիկ դարձնելու համար: Նաև հաշվի առնելով հայ հանրության և մշակույթի առանձնահատկությունները՝ կարելի է նշել հետևյալը. «Հիմքային եկամուտ» գաղափարը վերանայելու ընթացքում չափազանց կարևոր է հաշվի առնել երկրի պատմական, աշխարհագրական դիրքը, մարդկանց մտածելակերպը և ազգին բնորոշ մշակութային բնութագրերը:

7. Իրականացված հարցման արդյունքում պարզ են դարձել քաղաքացիների ցանկությունն ու վերաբերմունքը «Հիմքային եկամտի» նկատմամբ (ի հակադրություն սոցիալական ծրագրերից ստացած միջոցների): Հարցման արդյունքները ցույց են տվել, որ *մարդիկ ավելի շատ ցանկանում են ստանալ «Հիմքային եկամուտ», քան օգտվել սոցիալական ծրագրերից:*
8. Հետազոտության մեջ հեղինակը անդրադարձել է ՀՀ-ի բնակչության արտագաղթի խնդրին: Եթե Հայաստանում բնակվող մարդիկ Հայաստանում չկարողանան բարելավել իրենց կյանքը, նրանք կփորձեն օգտագործել իրենց կարողությունները այլ երկրներում: Ըստ հեղինակի ուսումնասիրությունների, «Հիմքային եկամուտը» կարող է խթան հանդիսանալ մարդկանց արտագաղթը դադարեցնելու համար: Այն մարդկանց կօգնի մնալ երկրում և նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսության աճին, կայունությանը և անվտանգությանը: Պոտենցիալ արտագաղթողներին պահելով երկրում և նրանց հնարավորություն տալով բարելավել սոցիալական վիճակը՝ արտագաղթը ի վերջո կդադարի, քանի որ նրանք իրենց ընտանիքների հետ կշարունակեն ապրել Հայաստանի Հանրապետությունում և մեծացնել իրենց երեխաներին այստեղ: Սա աղքատությունը վերացնելու հարցի պատասխանն է. հատկապես կարևոր է պահպանել հայ հանրությունը Հայաստանում: Սակայն ևս մեկ անգամ շեշտվել է, որ այլ երկրներում «Հիմքային եկամուտ» ծրագրի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ աղքատությունը ոչ թե ավելացել, այլ նվազել է: Այս միջոցով Հայաստանի Հանրապետությունը կշահի՝ մարդկային կապիտալը և ներուժը պահելով երկրի ներսում, իսկ աղքատությունը կնվազի:
9. Ներկայացվել են «Հիմքային եկամտի» ֆինանսավորման տեսական վերլուծություն և հաշվարկներ, որի արդյունքում եզրակացվել է, որ *նման նպատակի ֆինանսավորումը հնարավոր է իրականացնել:* «Հիմքային եկամտի» ֆինանսավորման իրականացումը առանց եկամտահարկը

բարձրացնելու՝ այլ ծրագրերի և բյուրոկրատիայի վրա ծախսերի խնայողությունների միջոցով, կարող է «Հիմքային եկամտի» կիրառման հաջող ներուժ հանդիսանալ: Եթե փորձենք «Հիմքային եկամուտը» կիրառել բոլոր քաղաքացիների համար, նախնական հաշվարկով, ֆինանսավորման հետ կապված խնդիրներ կունենանք: Խնդիրը լուծելու համար ուշադրությունը կենտրոնացվել է միայն աղքատ մարդկանց, այսինքն՝ բնակչության 30%-ի վրա: Առաջարկվում է սոցիալական ծրագրերին տրամադրվող գումարը հատկացնել աղքատ բնակչությանը, իսկ ծրագրին հավելյալ տրամադրված գումարը հատկացնել միայն շատ և ծայրահեղ աղքատ մարդկանց: Հաշվարկներից ակնհայտ է, որ այս ամենը հնարավոր է իրականացնել:

Հետազոտության մեջ ցույց է տրվել, որ «Հիմքային եկամտի» ֆինանսավորման հիմնական աղբյուր կարող է հանդիսանալ սոցիալական ծրագրերին հատկացված գումարի տրամադրումը, իսկ ընդհանուր հարկային եկամտի աճը հնարավորություն կտա բոլոր քաղաքացիներին տրամադրել ցանկալի քանակությամբ գումար: «Հիմքային եկամուտը» ֆինանսավորելու համար շահավետ կլինի նաև այլ աղբյուրների որոնումը: Նման աղբյուրներ կարող են հանդիսանալ.

- «Հիմքային եկամտի» հարկ վճարողների 2.5%-ի համար ներկայացնել լրացուցիչ հարկային դրույքաչափեր: Մեծացնելով հարկային տոկոսադրույքները ողջ բնակչության համար՝ միայն «Հիմքային եկամտի» նկատմամբ բացասական վերաբերմունք կառաջացնի: Մարդկանց և ընտանիքների նվազագույն և միջին աշխատավարձերը դեռևս չափազանց ցածր են, և պետք չէ ավելի բարդացնել նրանց կյանքը:
- Վերաբաշխել այլ ոլորտներին պետական բյուջեից հատկացված ֆինանսավորումը,
- տնտեսական աճին նպաստելու համար հիմնել հավելյալ ծրագրեր, որպեսզի հայկական սփյուռքը ներդրումներ կատարի,
- համագործագել միաջազգային կազմակերպությունների հետ, որոնք կօգնեն «Հիմքային եկամուտ» ծրագրի ներդրմանը:

Որպես «Հիմքային եկամտի» ծրագրի իրագործման հաշվարկների ամփոփում՝ ներկայացվում են հետևյալ թվերը՝

- յուրաքանչյուր մարդու շատ կամ ծայրահեղ աղքատության մեջ հատկացնել ամսական **37,514** դրամ (բնակչության 9.8%),
յուրաքանչյուր աղքատ մարդու հատկացնել ամսական **14,316** դրամ
(բնակչության 20.2%);
կամ
- յուրաքանչյուր աղքատ մարդու հատկացնել ամսական **21,894** դրամ
(բնակչության 30%):

Արտաքին՝ միջազգային կազմակերպությունների օգնությամբ, հնարավոր կլինի ավելի շատ ֆինանսավորման աղբյուրներ հայտնաբերել և հասնել ցանկալի գումարին՝ 30,934 դրամ աղքատության մեջ գտնվող յուրաքանչյուր մարդու համար:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. Գալստյան Ա. , ADVANTAGES AND DISADVANTAGES OF UNCONDITIONAL BASIC INCOME // ԳԻՏԱԿԱՆ ՀՈՐՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, Գավառի պետական համալսարանի ամենամյա 19-րդ գիտաժողով, Գավառ 2017 - էջ 265 - 273:
2. Գալստյան Ա. , SUCCESSFUL EXPERIMENTAL IMPLEMENTATION OF BASIC INCOME IN TWO COUNTRIES IN THE WORLD // ԳԻՏԱԿԱՆ ՀՈՐՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, Գավառի պետական համալսարանի ամենամյա 19-րդ գիտաժողով, Գավառ 2017 - էջ 274 - 280:
3. Գալստյան Ա. , ՀԻՄՔԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ԱՅՍՈՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ // Այլընտրանք՝ գիտական հանդես, Երևան 2017 - N1, էջ 20 - 27:
4. Գալստյան Ա. , BASIC INCOME FUNDING POSSIBILITIES // Այլընտրանք, գիտական հանդես, Երևան 2017 - N1, էջ 28 - 31:
5. Գալստյան Ա. , POVERTY AND MALNUTRITION IN ARMENIA // ՖԻՆԱՆՍՆԵՐ և ԷԿՈՆՈՄԻԿԱ, գիտական հանդես, 3-4 (199-200), Երևան 2017 - էջ 128 - 129:
6. Գալստյան Ա. , POSSIBILITIES OF IMPLEMENTATION OF BASIC INCOME IN ARMENIA // ՖԻՆԱՆՍՆԵՐ և ԷԿՈՆՈՄԻԿԱ, գիտական հանդես, 3-4 (199-200), Երևան 2017 - էջ 130 - 131:

ГАЛСТЯН АРМИНЭ ЗАВЕНОВНА

ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ БАЗОВОГО ДОХОДА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание учёной степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его сферами”.

Защита диссертации состоится 8 февраля 2019 года в 13³⁰ часов на заседании Специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х.Абовяна 52.

РЕЗЮМЕ

Экономическое состояние населения Республики Армения, доходы граждан и статистические факты бедности предопределили актуальность диссертации. Уровень бедности в Республике Армения колеблется в пределах 30%. Неравенство доходов населения привело к резко выраженному разделению общества, которое постепенно углубляется. Усиление неравенства доходов населения в сторону увеличения количества бедных углубило процессы антогонистического противостояния разных слоёв населения. Теоретическое изучение мировых тенденций на сегодняшний день привело к идеи «Основного дохода» (также употребляется термин «Базового дохода»). В течении последних десятилетий возможности его внедрения всё чаще рассматриваются и экспериментируются в разных странах. Под идеей «Основного дохода» подразумевается такая система социальных пособий, которая организована в рамках обязательств правительства перед своими гражданами. Безусловный «Основной доход» не считается программой социального обеспечения. Предполагается, что это гарантия того, что каждый из людей должен иметь приют, продовольствие и здравоохранение¹².

Целью диссертационной работы является исследование возможности внедрения идеи «Основного дохода» в Республике Армения и в разработке конкретных предложений по борьбе с бедностью.

¹² G.Standing, Basic Income: A 21st Century Economic Right, -Institut de Drets Humans de Catalunya, http://www.guystanding.com/files/documents/CDHE_Standing.pdf

Для достижения поставленной в диссертационной работе цели выделены следующие задачи:

- исследовать концептуальные экономические основы «Основного дохода»,
- изучить международный опыт применения «Основного дохода»,
- выявить положительные и отрицательные последствия использования «Основного дохода»,
- выявить основные качественные и количественные показатели, характеризующие социально-экономическую ситуацию в Республике Армения,
- исследовать основные социальные программы, реализуемые в Республике Армения и их основные направления,
- выявить социально-экономические последствия введения идеи «Основного дохода»,
- изучить возможные источники финансирования «Основного дохода» и вводящих направлений его внедрения в Армении.

Объектом исследования являются основные социальные программы, реализуемые в Республике Армения, а предметом исследования являются особенности внедрения «Основного дохода» и возможные источники его финансирования.

В результате проведенного исследования получены теоретические, методические и практические результаты, из которых в качестве научной новизны можно выделить следующее:

- изучено влияние «Основного дохода» на социально-экономическое состояние общества в тех странах, где эта идея была экспериментально апробирована, а также отмечены ее положительные и отрицательные последствия;
- обоснована роль идеи «Основного дохода» как способ решения наиболее важных социально-экономических проблем в Республике Армения и её преимущество по сравнению с другими уже действующими социальными программами;
- выявлено отношение населения к внедрению идеи «Основного дохода» в процессе социологического опроса;
- предложены источники финансовых ресурсов, необходимых для реализации идеи «Основного дохода», а также была проведена их качественная и количественная оценка.

ARMINE ZAVEN GALSTYAN

ISSUES WITH IMPLEMENTATION OF BASIC INCOME IN THE REPUBLIC OF ARMENIA

The abstract of the dissertation for the pursuing of scientific degree of PhD of
Economics in the field 08.00.02 “Economics and
Management of Economy and its Spheres”

The defense of the dissertation will take place at 13³⁰ on February 8th, 2019 at
the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying
Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.
Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia

SUMMARY

Today poverty rate in Armenia is a staggering 30%. Historically, after Armenia gained independence in 1992, the poverty rate has been hovering between lower and higher bounds of this number. Even though the pensions and wages increased through the time, the cost of living in Armenia increased much higher. Despite economic progress in general, billions of dollars in remittances, large loans and grants from international organizations, poverty in Armenia is still a very pressing concern. This warrants consideration of a new type of program previously not implemented in Armenia, but with a potential of a huge systemic change, reduction of poverty rate and introduction of more social justice in the Armenian society. An Unconditional Basic Income (also called Basic Income, Basic Income Guarantee, Citizen’s Income, or Universal Basic Income) is a form of social security system when all residents of a country systematically receive an unconditional sum of money. Unconditional Basic Income can be structured to be received by citizens in addition to their other incomes. It can be organized as part of government obligation to their citizens. Unconditional Basic Income is not considered a welfare program. It is supposed to be a guarantee that every single human being in a society should have a shelter, food and health care ¹³.

The main objective of the research is to study the possibility of implementation the "Basic Income" in the Republic of Armenia and to formulate concrete proposals for combating poverty. To achieve the goals set in the thesis, the following tasks are identified:

¹³ G.Standing, Basic Income: A 21st Century Economic Right, -Institut de Drets Humans de Catalunya, http://www.guystanding.com/files/documents/CDHE_Standing.pdf

- To explore conceptual economic foundations of the concept of "Basic Income";
- To examine different experiments performed in the world, which studied the effectiveness of "Basic Income";
- To reveal positive and negative effects of "Basic Income";
- To reveal main qualitative and quantitative indicators characterizing the socio-economic situation in the Republic of Armenia;
- To examine main social programs implemented in the Republic of Armenia and their main directions;
- To anticipate and predict socio-economic consequences of introducing "Basic Income" in the Republic of Armenia;
- To examine main sources of funding for "Basic Income" in the Republic of Armenia.

The research object of the given research is main social programs in the Republic of Armenia, and the research subject is the feasibility of implementation of Basic Income.

The main scientific results of the study have theoretical and practical importance, the scientific novelty of which consists of the following:

- Revealing socio-economic consequences of implementing "Basic Income" in the Republic of Armenia and its positive and negative effects,
- Justification of the role of "Basic Income" as an important socio-economic solution in the Republic of Armenia, as well as its advantages compared to existing social programs,
- Conducting a survey to identify attitude of people towards the idea of implementation of "Basic Income", and their preferences when compared to traditional social programs,
- Suggesting possible sources of funding for implementation of "Basic Income", conducting qualitative and quantitative analysis,
- Proposing reduction of poverty through "Basic Income" in the Republic of Armenia.

